Կարգապահական գործ թիվ ԿԳ-22006

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի հուլիսի 26-ի թիվ 27-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/15-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆՆԱ ՀԱՍՐԱԹԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Սարդարյանի, Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Աննա Հասրաթի Տոնոյանին (արտոնագիր թիվ 1791) (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անուշ Միլիտոսյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Աննա Տոնոյանը «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի 02.11.2021թ. թիվ 402-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջը ներկայացրել է 2021թ. հուլիսին:

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն:

08.12.2021թ. դատարանը վճռել է՝ Անուշ Կառլենի Միլիտոսյանի հայցն ընդդեմ «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի՝ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի բռնագանձման պահանջների մասին մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

Դիմողը խնդրել է փաստաբաններին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 27.01.2022թ. թիվ 23-Ա/ԿԳ-22006 որոշմամբ փաստաբան Աննա Հասրաթի Տոնոյանի

նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.2 և 3.5.5 **ենթակետերի խախտման հատկանիշներով:**

08.02.2022թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Աննա Տոնոյանի կողմից Դիմումի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն, որի համաձայն՝ Անուշ Միլիտոսյանը ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ է դիմել 2020 թվականի դեկտեմբեր ամսին հայտնելով, որ իրեն ազատել են աշխատանքից:

Անուշ Միլիտոսյանի դիմումի շրջանակներում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված երկամսյա ժամկետում 29.12.2020 թվականին, կազմվել և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել հայցադիմում:

Հայցադիմումը պարունակել է հրամանի անվավերության վերաբերյալ առկա բոլոր փաստական հիմքերը, փաստարկները և իրավական հիմնավորումները:

Որպես պահանջ նշվել է.

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ին պարտավորեցնել Անուշ Կառլենի Միլիտոսյանին վերականգնել նախկին աշխատանքում:

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել 83.230 (ութսուներեք հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ որպես 30.12.2020 թվականի դրությամբ հարկադիր պարապուրդի գումար:

Հարկադիր պարապուրդի գումարի հաշվարկը շարունակել մինչև Անուշ Կառլենի Միլիտոսյանին նախկին աշխատանքում վերականգնելը, իսկ նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի

Միլիտոսյանի բռնագանձել նրա միջին աշխատավարձի տասներկուապատիկի 511 668 (հինգ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր վաթսունութ) ՀՀ դրամի չափով գումար:

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ որպես աշխատանքային պայմանագրով սահմանված, սակայն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար չվճարված աշխատավարձին հավասարեցված գումար: Գումարի հաշվարկը շարունակել մինչև Անուշ Կառլենի Միլիտոսյանին նախկին աշխատանքում վերակազմելը, իսկ նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

Փաստաբանը նշել է, որ հայցադիմումից պարզ է, որ հրամանի անվավերության պահանջի բացակայությունը զուտ վրիպակի արդյունք է, որը լրացվել է նախնական դատական նիստում և Դատարանի արձանագրային որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ամփոփելով վերոգրյալը՝ փաստաբանը գտել է, որ հրամանի անվավերության պահանջի բացակայությունը զուտ վրիպակ է, այլ ոչ ոլորտին չտիրապետելու, Անուշ Միլիտոսյանի իրավունքների ոչ պատշաճ պաշտպանության կամ այլ որևէ ոչ իրավաչափ վարքագծի արդյունք:

Գործի նախապատրաստման ընթացքում 17.01.2022 թվականին փաստաբան Աննա Տոնոյանը ներկայացվել է լրացուցիչ բացատրություն, որով մասնավորապես հայտնել է, որ հայցապահանջի փոփոխությունը չպետք է հանգեցնի դատարանի մատչելիության սկզբունքի խախտման, ինչը, սակայն, տեղի է ունեցել: Նշված քաղաքացիական գործով առկա է դատական սխալ, որը և հանգեցրել է գործի սխալ լուծման, իսկ ինչ վերաբերում է իր թերացմանը, ապա այն ուղղվել է ժամանակին, և չէր կարող հանգեցնել հայցային վաղեմություն կիրառելու կամ Անուշ Միլիտոսյանի համար այլ անբարենպաստ հետևանքի:

<u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

01.04.2022թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Դիմողը ներկայացրել է առարկություն:

05.04.2022թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 26.07.2022թ. ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ

կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի 02.11.2020 թվականի թիվ 402-Ա հրամանի քաղվածքի համաձայն՝ 2020 թ. նոյեմբերի 3-ին լուծվել է ԵՊԿ-ի և Հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս Անուշ Կառլենի Միլիտոսյանի միջև 01.09.2006թ. կնքված թիվ 305 աշխատանքային պայմանագիրը: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

2. Դիմող Անուշ Միլիտոսյանի իրավունքների պաշտպանությունն իրականացրել է փաստաբան Աննա Տոնոյանը, որպես Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպան: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

3. Անուշ Միլիտոսյանի դիմումի շրջանակներում Աննա Տոնոյանը երկամսյա ժամկետում 29.12.2020 թվականին, կազմվել և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել հայցադիմում: Հայցադիմում որպես պահանջ նշվել է.

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ին պարտավորեցնել Անուշ Կառլենի Միլիտոսյանին վերականգնել նախկին աշխատանքում:

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել 83 230 (ութսուներեք հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ որպես 30.12.2020 թվականի դրությամբ հարկադիր պարապուրդի գումար:

Հարկադիր պարապուրդի գումարի հաշվարկը շարունակել մինչև Անուշ Կառլենի Միլիտոսյանին նախկին աշխատանքում վերականգնելը, իսկ նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել նրա միջին աշխատավարձի տասներկուապատիկի 511 668 (հինգ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր վաթսունութ) ՀՀ դրամի չափով գումար:

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ որպես աշխատանքային պայմանագրով սահմանված, սակայն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար չվճարված աշխատավարձին հավասարեցված գումար: Գումարի հաշվարկը շարունակել մինչև Անուշ Կառլենի Միլիտոսյանին նախկին աշխատանքում վերակազմելը, իսկ նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, հայցադիմումով և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

4. 08.07.2021թ. դատարանը թույլատրել է հայցի առարկայի փոփոխություն՝ նախկին պահանջը Աննա Տոնոյանի կողմից ավելացվել է հետևյալով՝ անվավեր ճանաչել «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի ռեկտորի 02.11.2020 թ. թիվ 402-Ա հրամանը: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

5. Դատարանի 08.12.2021թ. վճռով Անուշ Կառլենի Միլիտոսյանի հայցն ընդդեմ «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի՝ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի բռնագանձման պահանջների մասին մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

6. Վերաքննիչ դատարանի 17.05.2022թ. որոշմամբ Թիվ ԵԴ/0011/02/21 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 08.12.2021թվականին կայացրած վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված 20.06.22թ. տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Աննա Տոնոյանը (արտոնագիր թիվ՝ 1791) փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 14.06.2014թ., և 2019-2022թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Աննա Տոնոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«**Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն

օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով վստահորդի շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նպատակով փաստաբանի համար սահմանվում են որոշակի առանձնահատուկ պարտականություններ, որոնք կապված են փաստաբանի մասնագիտական կարողությունների և հմտությունների ու դրանցից բխող պատշաճ գործողությունների կատարման հետ:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

- ***արդյոք փաստաբան Աննա Տոնոյանը փրամադրել է Դիմողին բարեխիղճ և որակյալ իրավական օգնություն՝ ելնելով Դիմողի նպաստավոր շահերից:***

Սույն գործով հաստատված է այն փաստը, որ Փաստաբանը ստանձնել է Անուշ Միլիտոսյանի իրավունքների պաշտպանությունն և երկամսյա ժամկետում՝ 30.12.2020 թվականին, կազմվել և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել հայցադիմում: Հայցադիմում որպես պահանջ նշվել է.

- «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ին պարտավորեցնել Անուշ Կառլենի Միլիտոսյանին վերականգնել նախկին աշխատանքում:
- «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել 83 230 (ութսուներեք հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ որպես 30.12.2020 թվականի դրությամբ հարկադիր պարապուրդի գումար:
- Հարկադիր պարապուրդի գումարի հաշվարկը շարունակել մինչև Անուշ Կառլենի Միլիտոսյանին նախկին աշխատանքում վերականգնելը, իսկ նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

- Նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել նրա միջին աշխատավարձի տասներկուապատիկի 511 668 (հինգ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր վաթսունութ) ՀՀ դրամի չափով գումար:
- «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ից հօգուտ Անուշ Կառլենի Միլիտոսյանի բռնագանձել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ որպես աշխատանքային պայմանագրով սահմանված, սակայն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար չվճարված աշխատավարձին հավասարեցված գումար: Գումարի հաշվարկը շարունակել մինչև Անուշ Կառլենի Միլիտոսյանին նախկին աշխատանքում վերակազմելը, իսկ նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

Այնուհետև, 08.07.2021թ. Աննա Տոնոյանի կողմից ներկայացվել է հայցի առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդություն, որը դատարանի կողմից թույլատրվել է և նախկին պահանջը Աննա Տոնոյանի կողմից ավելացվել է հետևյալով՝ անվավեր ճանաչել «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի ռեկտորի 02.11.2020 թ. թիվ 402-Ա հրամանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ *աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ *Դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցադիմումի կամ դիմումի հիման վրա:*

Սույն օրենսգրքով սահմանված կարգով հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջից, փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցվորի պահանջը, կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, սկսել արտոնագրված հաշտարարի

մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութահիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:*

Ակնհայտ է, որ Փաստաբանի կողմից կատարված գործողությունները բխել են վերը նշված կարգավորումներից, հետևաբար կազմված հայցադիմումը, ինչպես նաև հայցի առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը չէր կարող դիտարկվել որպես Փաստաբանի կողմից իր վստահորդին բարեխիղճ իրավաբանական օգնություն տրամադրելը կասկածի տակ դնող հանգամանք:

Նման պայմաններում Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը ձեռնարկել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը, դրանով իսկ բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:

Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ Փաստաբանի կողմից ոչ բարեխիղճ գործողությունների հետևանքով Դատարանը 08.12.2021թ. վճռել է՝ Անուշ Կառլենի Միլիտոսյանի հայցն ընդդեմ «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի՝ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի բռնագանձման պահանջների մասին մերժել՝ **հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով,** հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը 17.05.2022թ. որոշմամբ թիվ ԵԴ/0011/02/21 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 08.12.2021թվականին կայացրած վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության, քանի որ **Դատարանը հայցային վաղեմություն կիրառելով թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:**

Այսպիսով, գնահատելով Դիմողի հանձնարարության շրջանակներում Փաստաբանի կողմից կատարված գործողությունները, Խորհուրդը փաստում է, որ Դիմողի պնդումները չեն հիմնավորվում, մինչդեռ գնահատված ապացույցների շրջանակներում հիմնավորվում է Փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարության կատարված լինելու հանգամանքը:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն հաստատվել, Խորհուրդը փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Աննա Հասրաթի Տոնոյանի (արտոնագիր թիվ՝ 1791) նկատմամբ հարուցված թիվ 22006 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

26 հուլիսի 2022թ.
թիվ ԿԳ/15-Ա
ք. Երևան